# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՆԻԿԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՈԱԿ

---


Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնք
Փանիկ,1փողոցփակուղի 2 թիվ 4 , հեռ. 094376655

Email-paniki.mankapartez@mail.ru


05 ՄԱՐՏԻ 2026թ.
N 14

«ՀԱՅԿ ԴԱՎԹՅԱՆ» ԱՁ -Ի ՏՆՕՐԵՆ

ՊԱՐՈՆ՝ ՀԱՅԿ ԴԱՎԹՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

N **« ՇՄՓՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-26/1-3»**

ծածկագրով

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Դավթյան `

«Հայկ Դավթյան» ԱՁ-ի և ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Փանիկի նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ-ի միջև կնքվել է <<12>> հունվար 2026թ-ի « ՇՄՓՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-26/1-3» ծածկագրով պայմանագիր, որի շրջանակում պետք է մատակարարվեր « ՇՄՓՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-26/1-3» - ծածկագրով պայմանգրի 6-րդ չափաբաժնով նախատեսած սննդամթերքը ` կարագ:

Տեղեկացնում ենք, որ պայմանագրի տեխնիկական բնութագիր վճարման ժամանակցույցի հավելված թիվ 2-ի «ՇՄՓՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-26/1-3» ծակագրով պայմանգրի 6-րդ չափաբաժնով `նշված ժամկետ-ներում / կարագ / ամբողջովին հրաժարվել է պայմանագրով ստանձնած պարտավորություններից` չմատակարարելով վերը նշված ապրանքը: Հայտնում ենք Ձեզ, որ ընկերության կողմից չեն պահ-պանվում պայմանագրով ստանձնած ապրանքի ձեռքբերման մատակարարման ժամկետները: Պայմանագրի 2.1.7 կետի (բ) ենթակետի համաձայն` Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի և ամբողջովին լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագրի դրույթներն.

2.1.1 հրաժարվել է պայմանագրով ստանձնած ապրանքների մատակարարումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, **« Հայկ Դավթյան»** ԱՁ-ն հրաժարվել է պայմանագրով ստանձնած պարտավորություններից`Պատվիրատուն միակողմանի և մասնակի լուծում է «ՇՄՓՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-26/1-3» - ծածկագրով 6-րդ չափաբաժինը`/կարագ / ,պայմանագիրը համարելով մասնակի լուծված ընդհանուր 640356/վեց հարյուր քառասուն հազար երեք հարյուր հիսունվեց / ՀՀ դրամի չափով` պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները :Ընդ որում, գնումների գործընթացի

կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝մասնակցի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը,դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները,որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի և ամբողջովին լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը մասնակիցը հրավերով և կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի,պայմանագրի և կամ որակավորման ապահովման գումարը:

Ելնելով վերոգրյալից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում՝ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ձեր կազմակերպությանը կկիրառվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները:

Այսպիսով «Հայկ Դավթյան» ԱՁ -ն սույն թվականի մարտի 04-ի գրությամբ հրաժարվել է պայմանագրով 6-րդ չափաբաժնի համար ապրանք մատակարարելուց, և (Հավելված 4.2) սահմանված որակավորման ապահովման 111690/ մեկ հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր իննսուն / ՀՀ դրամը և (Հավելված 5.1) սահմանված պայմանագրի ապահովման 74460 /յոթանասունչորս հազար չորս հարյուր վաթսուն / ՀՀ դրամ գումարները վճարել հետևյալ 900008000664 և 900008000698 գանձապետական հաշիվներին :

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Փանիկի նախադպրոցական ուսումնական հաստատություն>>ՀՈԱԿ տնօրեն՝ Ա.Մելքոնյան

Կատարող ՝ գնումների համակարգող Ա.Մալնազարյան /հեռ.093823160/